շոցս ինձ ծերութեան որդի և տուի ամէն կամօք և ամէն սրտի յօժարութեամբ սբ. ծննդեանն Քի. Այ. յիշատակ ինձ և իմոցըն, սբ. աւետարանն և այս ճաշոցն ի վայելումն մանկանց եկեղեցւոյ: Աղաչեմ և երկրպագեմ կարդացողացդ և տեսողացդ յիշել զՎարդան մենակեց անապատի ի սբ. յաղօթս ձեր և Ած. յիշէ»: «Գրեցաւ սբ. տառս այս ձեռամբ անարհեստ գրչի Վարդան անթիմոս եպիսկոպոսի, յըղորդ և յընտիր աւրինակէ, սբ. ուխտիս երաշխաւոր Ածածնի. որ կոչի Պետրոսի վանք, ի Թվիս Հայոց ՊԻԶ (=1377), ի ղանութեան Մամոյի և ի հայր. տեառն Կոստանտինոյ և այժմ Նահանգիս յաթոռակալութեան Յովհաննէս աբեղի, իմաստասէր և առաքինասիրի: Որ է ժամանակս խիստ խաղաղութիւն եկեղեցւոյ ամէն քրիստոնէից և անչափ յաժան է հացն. որ չէ լեալ: Բայց սով մեծ եւ խիստ է աստուածային բանին լսելոյ մեզ անժուժ առաջնորդացս և կրաւնաւորացս: Արդ՝ աղաչեմ զձեզ սբ. եղբարք. անմեղադիր լինել. զի ծեր էի եւ աչքս չի տեսնուլ. եւ միտքս եւ ամենայն զգայարանքս բդել է. բայց անուն գիտայ? և գրեցի . . . . . որ կենայ ի սբ. ծնունդն ի Բեթղէհէմ:

Ես տէր Վարդան անթիմոս եպիսկոպոս տուի ի Սարգիս աբեղայն զայս ճաշոցս, որ տանի յերուսաղէմ. եւ տայ ի սբ. ծնունդն Քի. յիշատակ ինձ և նորա, ընդ ձեռամբ Սարգիս աբեղիդ լինի. քանի ինքն կենդանի լինի, եւ այլ մարդ չունի իշխանութիւն ի վերայ նորա. մեր և նորա կացցէ սբ. գիրքս ի ծնունդն, և դուք հանդիպողք յիշեցէք զՎարդան եպկսն. և զՍարգիս աբեղադ. որ զգիրքդ եբեր յերուսաղէմ»:

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԿԱՐՈՒՑ.— Հաւանաբար ուխտաւորութեամբ Ս. Յակոբի վանքը այցելութեան եկած ըլլալով՝ կը վախճանի 1638ին և կը թաղուի Ս. Յակոբի վանքին գաւթին արեւմտեան սիւնին տակ. ունի հետեւեալ տապանագիրը. «Այս է հանգիստն տէր Վարդանայ, կարուց եպիսկոպոսին և մեծ սուգ եթող եղբաւր Յովհաննիսի, որ կարդայք յաղաւթս յիշեցէք: ՌՁԷ» (=1638):

ՎԱՐԴԱՆ ՊԵ. ԱՐԵՒԵԼՑԻ, (1321—1331).— 1331ին ընդօրինակուած Ճառընտրի մը եւ 1332ին գրուած Սարգիս գիրքի յիշատակարաններուն մէջ կը յիշատակուի նոյն Վարդան Արեւելցին, երբ գրասէր Առաջնորդ Ս. Աթոռին. (ՄՁ. Թ. 2Ձ2 և 299):